ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ԳՀԾՁԲ-23-10/10-2

ք. Երևան 16-ը հունիսի 2023թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ՝ Կ. Բրուտյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՍՊԵԿՏՐ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Վարդանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է էլեկտրական սարքավորումների վերանորոգման և պահպանման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.[16.2]

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:[17.1]

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 /հինգ/ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 7 000 000 *(յոթ միլիոն)* ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները: Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված եռամսյակներին /ամիսներին/, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 11-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է, որը կազմում է 16 000 000 (տասնվեց միլիոն) ՀՀ դրամ.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր *(նախահաշվային)* գների հանրագումարն է, որը կազմում է՝ 20,250,180 (քսան միլիոն երկու հարյուր հիսուն հազար մեկ հարյուր ութսուն) ՀՀ դրամ.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու կամ չմատուցելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:[21.1]

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Սույն պայմանագրի շրջանակներում պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ ԿՇ ԵՎ ԱԲ վարչությունը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«ՍՊԵԿՏՐ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5	ՀՀ, ք. Երևան,Ավան Բրյուսովի թղմ., 63շ, բն.6
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 1570001274210300
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 00829745
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	տնօրեն
Գ. ԲՐՈՒՏՅԱՆ	Ա. ԱՎԱՐԴԱՆՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԾՁԲ-23-10/10-2 պայմանագրի

*ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ
Չափաբաժին 2

Հ/հ	Հաստատված ծախսային ծրագրի անվանատողը (ծառայության անվանումը)	Բնութագրող ցուցանիշները			Չափման միավորը	Միավորի նախահաշվային գինը (ՀՀ դրամ)			Ծառայության առավել ագույն գումարը (ՀՀ դրամ)	Կատարման վայրը
						մինչև 30 կվտ	31-75 կվտ	76-200 կվտ		
1	գեներատորների վերանորոգման և պահպանման ծառայություններ (CPV 50531230/1)	ՇՄԲՄՇ	1	Մխոցախմբի վերանորոգում					7 000 000	ՀՀ ՊՆ ԶՈՐԱՄԱՍԵՐ
				գլխամասի ապատեղակայում/տեղակայում	դրամ	100,800	106,680	177,780		
				գլխամասի նոր միջադիր		100,860	57,840	86,160		
				փականային համակարգի կարգաբերում		37,380	56,040	224,040		
				շարժաթևերի ապատեղակայում/տեղակայում		66,720	80,040	133,380		
				նոր շարժաթևեր		183,360	444,960	981,360		
				մխոցների ապատեղակայում/տեղակայում		66,720	80,040	133,380		
				նոր մխոցներ		88,080	198,000	647,640		
				նոր մխոցային օղակներ		100,860	132,000	288,840		
				նոր մխոցամատեր		11,040	55,080	114,720		
				շարժիչի յուղի փոխարինում նորով		55,080	93,360	150,000		
				յուղի նոր զտիչի փոխարինում նորով		5,520	143,760	143,760		
			2	Գլխամասի փականային համակարգի վերանորոգում						
				ներածման կոլեկտորի ապատեղակայում / տեղակայում	դրամ	33,360	33,360	53,400		
				արտածման կոլեկտորի ապատեղակայում / տեղակայում		33,360	33,360	53,400		
				փականների քսանստեցում իրենց բներում, հերմետիկության սուգում		80,040	96,000	320,040		
				գլխամասի նոր փականներ		36,720	110,040	770,040		
				նոր գլխամաս		229,200	458,400	1,620,000		
1	գեներատորների վերանորոգման և պահպանման ծառայություններ (CPV 50531230)	ՇՄԲՄՇ	3	Բլոկի վերանորոգում					7 000 000	ՀՀ ՊՆ ԶՈՐԱՄԱՍԵՐ
				Հովացման համակարգի ապատեղակայում / տեղակայում	դրամ	99,600	104,400	108,000		
				շարժիչի անջատում գեներատորից և կրող շրջանակից		100,080	120,000	177,780		
				Թափանիվի անջատում ծնկաձև լիսեռից		26,760	42,720	66,720		
				ծնկաձև լիսեռի ապատեղակայում		33,360	53,400	66,720		
				Բլոկի գլանների ապատեղակայում/տեղակայում		40,080	64,080	133,380		

				Բլոկի նոր գլաններ		146,760	162,840	838,440		
				Շարժիչի հավաքում, գեներատորի հետ կցորդում, տեղակայում կրող շրջանակի վրա		220,080	266,760	444,480		
			4	Ծնկաձև լիսեռի վերանորոգում						
				լիսեռի հիմնական վզիկների և շարժաթևային վզիկների չափում, էլիպսության աստիճանի որոշում	դրամ	33,360	40,080	44,520		
				լիսեռի վերականգնում մասնագիտացված արհեստանոցում		66,720	80,040	88,920		
				հիմնական և շարժաթևային ներդիներ		146,760	165,000	240,720		
			5	Յուղման համակարգի վերանորոգում						
				Շարժիչի յուղի պոմպի ապատեղակայում և տեղակայում	դրամ	40,080	48,000	53,400		
				յուղի պոմպի վերանորոգում և կարգաբերում		33,360	40,080	44,520		
				ռեդուկցիոն փականի վերանորոգում և կարգաբերում		20,040	24,000	33,360		
				յուղի ռադիատորի ապատեղակայում և տեղակայում		16,680	16,680	22,320		
				յուղի ռադիատորի մաքրում	դրամ	33,360	33,360	33,360		
				յուղի ռադիատորի նոր միջադիր		14,400	14,400	14,400		
				յուղի ռադիատորի փոխարինում նորով		165,000	165,000	165,000		
				յուղի մատակարարման համակարգի մաքրում		33,360	40,080	44,520		
				յուղի կոշտ զտման զտիչի կամ կենտրոնախույս զտիչի մաքրում		33,360	53,400	53,400		
			6	Վառելանյութի մատակարարման, բարձր ճնշման պոմպի և բոցամուղների վերանորոգում						
				Վառելանյութի մատակարարման խողովակաշարի վիճակի ստուգում	դրամ	16,680	16,680	22,320		
				Վառելանյութի ռետինե նոր փողրակներ		19,080	28,680	46,800		
				Վառելանյութի ջրանջատող զտիչի նոր ներդիր		5,760	7,680	11,520		
				վառելանյութի նուրբ զտման զտիչ		5,760	7,680	11,520		
				վառելանյութի նախամղիչ պոմպ		31,200	31,200	31,200		
				վառելանյութի նախամղիչ պոմպի փոխարինում նորով		9,600	13,440	19,080		
				վառելանյութի բարձր ճնշման պոմպի ստենդավորում		66,720	80,040	88,920		
1	գեներատորներ ի վերանորոգման և պահպանման ծառայություններ (CPV 50531230)	ՇԱՐԺԻՉ		պլունժերային զույգերի փոխարինում նորով		88,080	132,000	231,000	7 000 000	ՀՀ ՊՆ ԶՈՐԱՄԱՍԵՐ
				բոցամուղների փոշեցուցիչների փոխարինում նորով և կարգաբերում		66,720	80,040	133,380		
			7	Գործարկման համակարգի վերանորոգում						
				գործարկիչի ապատեղակայում և տեղակայում	դրամ	16,680	21,360	22,320		
				գործարկիչի քանդում և		16,680	16,680	16,680		

				հավաքում						
				գործարկիչի ստատորի փաթույթների վիճակի ստուգում		10,080	10,080	10,080		
				գործարկիչի խարսխի փաթույթների վիճակի ստուգում		10,080	10,080	10,080		
				գործարկիչի խարսխի կոլեկտորի վիճակի ստուգում		3,360	3,360	3,360		
				նոր գործարկիչ		302,520	302,520	302,520		
				գործարկիչի քսիչների վիճակի ստուգում		6,720	6,720	6,720		
				գործարկիչի նոր քսիչներ		11,040	12,000	14,520		
				մեկնարկիչի բենտեքսի աշխատանքի ստուգում		5,040	5,040	5,040		
				մեկնարկիչի նոր բենտեքս		55,080	55,080	55,080		
				կցորդիչ ռելեի աշխատանքի ստուգում	դրամ	3,360	3,360	3,360		
				կցորդիչ նոր ռելե		36,720	36,720	36,720		
				միջանկյալ ռելեի աշխատանքի ստուգում		5,040	5,040	5,040		
				միջանկյալ նոր ռելե		16,500	16,500	16,500		
				սնուցման լարերի և ծայրակալների վիճակի ստուգում		6,720	6,720	6,720		
				սնուցման նոր լարեր և ծայրակալներ		8,640	10,560	12,480		
			8	Լիցքավորման համակարգի վերանորոգում						
				լիցքավորման գեներատորի աշխատանքի ստուգում		6,720	6,720	6,720		
				լիցքավորման գեներատորի քսիչների և կոլեկտորի վիճակի ստուգում		6,720	6,720	6,720		
				լիցքավորման նոր քսիչներ		3,000	3,000	4,800		
				լիցքավորման համակարգի լարման կառավարիչի աշխատանքի ստուգում	դրամ	6,720	6,720	6,720		
				լիցքավորման համակարգի նոր լարման կառավարիչ		15,240	15,240	15,240		
				լիցքավորման գեներատորի փոկային միացման դեպքում փոկի վիճակի ստուգում		3,360	3,360	3,360		
				լիցքավորման գեներատորի նոր փոկ		4,800	4,800	4,800		
			9	Հովացման համակարգի վերանորոգում						
				հովացման ռադիատորի մաքրում		33,360	40,080	44,520		
				շարժիչի բլոկի մաքրում		26,760	32,040	44,520		
				ռետինե նոր փողրակներ և խամուտներ		9,600	13,440	19,080		
				ջրի պոմպի աշխատանքի ստուգում		11,520	15,240	22,920		
1	գեներատորների վերանորոգման և պահպանման ծառայություններ (CPV 50531230/1)	ՇԱՐԺԻՉ		առանցքակալների և խտապուկների փոխարինում նորով		8,040	10,680	16,080	7 000 000	ՀՀ ՊՆ ՁՈՐԱՄԱՍԵՐ
				ռադիատորի և բլոկի վրայի ջրի ծորակների վիճակի ստուգում և փոխարինում նորով	դրամ	5,760	9,600	19,080		
				հովացման հեղուկի նախատաքացուցչի աշխատանքի ստուգում, վերանորոգում		43,380	43,380	43,380		
				նախատաքացուցչի բացակայության դեպքում նորի տրամադրում և		76,200	76,200	76,200		

				տեղակայում						
				Չսաղոչող հեղուկի փոխարինում նորով		30,000	44,040	80,040		
2		Ավտոմատ դիզելային դիմաց	10	Գեներատորի վերանորոգում						
				ուժային գեներատորի խարսխի և ստատորի փաթույթների վիճակի ստուգում	դրամ	26,760	26,760	33,360		
				գրգռման համակարգի աշխատանքի ստուգում		10,080	10,080	10,080		
				գրգռման համակարգի վերանորոգում		16,680	26,760	33,360		
				քսիչների փոխարինում նորով		5,760	9,600	15,240		
				առանցքակալների վիճակի ստուգում		16,680	16,680	16,680		
				ուժային գեներատորի ապատեղակայում /տեղակայում		66,720	80,040	88,920		
				ուժային գեներատորի նոր առանցքակալներ		13,440	19,080	30,480		
				ուժային լարերի վիճակի և ծայրակալների ստուգում		10,080	10,080	11,160		
				ուժային նոր լարեր և ծայրակալներ		9,600	15,240	22,920		
				ուժային գեներատորի պաշտպանիչ ավտոմատ անջատիչի ստուգում		6,720	6,720	6,720		
				ուժային գեներատորի պաշտպանիչ ավտոմատ նոր անջատիչ		19,080	57,240	95,280		
3		Հոսքային դիզելային	11	Կառավարման վահանակի աշխատանքի ստուգում						
				չափիչ սարքերի ստուգում, աստիճանավորում	դրամ	16,680	16,680	16,680		
				չափիչ նոր սարքեր		19,080	19,080	19,080		
				ավտոմատ անջատիչների ստուգում		16,680	16,680	16,680		
				ավտոմատ նոր անջատիչներ		17,160	17,160	17,160		
				վահանակի վերջնական կարգաբերում		16,680	16,680	16,680		
4			12	Դիզել գեներատորի նախնական ընդհանուր դիագնոստիկա	դրամ	50,400	56,400	62,400		
5			13	Դիզել գեներատորի փորձարկում անվանական տարբեր հզորությունների դեպքում	դրամ	66,720	80,040	111,120		
Ընդհանուրը՝						4,052,340	5,464,800	10,733,040		
Ընդամենը՝								20,250,180		

* Գնման պլանավորված նախահաշվային առավելագույն գինը կազմում է 7 000 000 (յոթ միլիոն) դրամ:

Ծառայության գնումը կիրականացվի ՀՀ ՊՆ ԿԾ և ԱԲ վարչության կողմից տրվող հայտերի հիման վրա:

Սույն ծառայությունների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում պատվիրատուի կողմից ծառայությունները ընդունվելու օրվան հաջորդող օրվանից սկսած 365 օրացուցային օր:

Մատուցված ծառայությունների դիմաց վճարումներն իրականացվում են՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 23-րդ ենթակետով սահմանված բանաձևով:

Ծառայությունների համար անհրաժեշտ ապրանքների գները ներառված են ծառայությունների միավորի նախահաշվային գներում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ Պաշտպանության նախարարի տեղակալ

Հ. ԵՐՈՒՏՅՈՆ

ԿԱՏԱՐՈՂ

«ՍՊԵԿՏՐ» ՍՊԸ տնօրեն

Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

** ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/Հ	Ծառայության անվանումը	Չափման միավորը	Քանակը	Առավելագույն գինը /ՀՀ դրամ/	Գնման ժամանակացույցը (ԿՇ և ԱԲ վարչության տրված հայտերի հիման վրա)
2	Գեներատորների վերանորոգման և պահպանման ծառայություններ	դրամ	1	7 000 000	3-րդից 4-րդ եռամսյակներ, բայց ոչ ուշ քան 30.11.2023թ.

** Կնքվելիք պայմանագրով նախատեսված ծառայությունների տեխնիկական բնութագրին համապատասխանող և դրա որևէ բաղադրիչի գծով որակական հատկանիշները գերազանցող ծառայություններ մատուցելու դեպքում հնարավոր է ծառայությունների ընդունումը, եթե առկա է հայտը նախագծող ներկայացուցչի /ներկայացուցիչների/ գրավոր մասնագիտական եզրակացությունը:

Հավելված N 2
N ԳՀԾՁԲ-23-10/10-2 պայմանագրի

***ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության							
Հ/Հ	CPV կոդը	անվանումը	չափման միավորը	քանակը	Առավելագույն գին /ՀՀ դրամ/	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ եռամսյակների, այդ թվում՝***	
						3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 11.12.2023թ.
2	50531230/1	Գեներատորների վերանորոգման և պահպանման ծառայություններ	դրամ	1	7 000 000	5 500 000	7 000 000

*** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ Պաշտպանության նախարարի տեղակալ

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«ՍՊԵԿՏՐ» ՍՊԸ տնօրեն

Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հավելված 3
N ԳՀԾՁԲ-23-10/10-2 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
N ԳՀԾՁԲ-23-10/10-2 պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն